ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« -----» դեկտեմբերի 2015 **թ.** **N---- -Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՏՎԻՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի 4-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 23-րդ կետով, 27-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված Երևանի քաղաքապետի լիազորությունները պատվիրակել Երևանի վարչական շրջանների ղեկավարներին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՏՎԻՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և 2003 թվականի հունիսի 26-ի N1205-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1317-Ն որոշման 1-ին կետով ՀՀ կառավարության 19.03.2015թ. N 596-Ն որոշման N 1 հավելվածը շարադրվել է նոր խմբագրությամբ:

Նոր խմբագրությամբ շարադրված N 1 հավելվածի 23-րդ կետի համաձայն՝ եթե ինժեներական ենթակառուցվածքների ստեղծման (մոնտաժման, վերանորոգման, վերականգնման և այլն) նպատակով պետությանը կամ համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասում կամ ընդհանուր օգտագործման տարածքում (հող, փողոց, մայթ և այլն) իրականացվելու են քանդման աշխատանքներ, ապա նախաձեռնող սեփականատերը, կառուցապատողը կամ մատակարարը կրում են պետությանը կամ համայնքին պատճառված վնասներն օրենքով սահմանված կարգով հատուցելու պարտավորություն՝ հողամասը կամ ընդհանուր օգտագործման տարածքները նախկին վիճակում և իրավասու մարմնի հետ կնքվող քաղաքացիաիրավական պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետներում չվերականգնելու համար: Ընդ որում, ենթակառուցվածքների ստեղծման կամ դրանց ընթացիկ (ոչ անհետաձգելի) վթարավերականգնողական աշխատանքները կատարվում են իրավասու մարմնի հետ պայմանագրի կնքումից հետո, իսկ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների դեպքում պայմանագիրը կարող է կնքվել աշխատանքների կատարման ընթացքում:

Նոր խմբագրությամբ շարադրված N 1 հավելվածի 27-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ նշված կարգի 26-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված՝ ցածր ռիսկայնության աստիճանի օբյեկտների թվին են դասվում շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման, ներքին հարդարման, տարածքների բարեկարգման և այլ փոքրածավալ շինարարական աշխատանքները, որոնք կարող են իրականացվել կառուցապատողի կողմից՝ առանց նախագծման և շինարարության թույլտվությունների: Մատակարար կազմակերպությունների կողմից ենթակառուցվածքների անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կատարման դեպքերը համարվում են շինարարության թույլտվություն չպահանջող գործառույթ, ընդ որում, այդ աշխատանքները կարող են սկսվել միայն իրավասու մարմնին տեղեկացվելուց հետո՝ աշխատանքների կատարման ընթացքում պետությանը կամ համայնքին պատճառվող վնասի վերականգնման մասին պայմանագիր կնքելու պայմանով:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քաղաքապետի առաջարկությամբ և ավագանու որոշմամբ վարչական շրջանի ղեկավարին կարող են պատվիրակվել նաև քաղաքապետի այլ լիազորություններ, բացառությամբ ավագանու հետ հարաբերություններում ունեցած լիազորությունների:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերը նշված լիազորությունները կարող են ավելի արդյունավետ և օպերատիվ կարգով իրականացվել վարչական շրջանների ղեկավարների կողմից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՏՎԻՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություններ պատվիրակելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՏՎԻՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություններ պատվիրակելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ